

**ՇՈՒՇԻԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ  
2016թ. ՄԱՐՏԻ 1-Ի ՆԻՍՏԻ N 1-03/16 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

**Արձանագրություն N 1-03/16**

Շուշիի տեխնոլոգիական համալսարանի գիտական խորհրդի

2016 թ -ի մարտի 1-ի նիստի

Ներկա էին՝ Թոքմաջյան Հ.Վ.(տ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Իսրայելյան Ռ.Գ. (տ.գ.դոկտոր-պրոֆեսոր), Գուլյան Ա.Ա.(կ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Հակոբյան Գ.Ա. (գ.գ. դոկտոր-պրոֆեսոր), Գալստյան Ս.Բ. (գ.գ.թ. դոցենտ), Շահնազարյան Ս.Ա. (գ.գ.թ.դոցենտ), Գրիգորյան Թ.Գ. (գ.գ.թ.), Առաքելյան Ա.Ա., Ծատրյան Ա.Ա., Սայիյան Ռ.Գ.:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. Շուշիի տեխնոլոգիական համալսարանը շինարարական բուհերի ասոցիացիային անդամագրելու մասին.

2.«Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» ամսագրի համակարգող և խմբագրական խորհուրդներում ներկայացուցիչներ առաջադրելու մասին.

3.Շուշիի տեխնոլոգիական համալսարանում Ե.23.01-«Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ և շինարարական նյութեր», Ե.23.02-«Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական, տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն», Զ.01.02-«Բուսաբուծություն» և Զ.01.04 - «Խաղողագործություն, պտղաբուծություն» մասնագիտություններով ատենախոսության թեմաներ հաստատելու նպատակով ՀՀ ԲՈՀ ներկայացվող դիմումի մասին.

**Լսեցին 1-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանը շինարարական բուհերի ասոցիացիային անդամագրելու մասին:

**Որոշեցին 1-** Շուշիի տեխնոլոգիական համալսարանը անդամագրելու շինարարական բուհերի ասոցիացիային :

**Լսեցին 2-**«Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» ամսագրի համակարգող և խմբագրական խորհուրդներում ներկայացուցիչներ առաջադրելու մասին:

«Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» ամսագրի համակարգող խորհուրդում առաջարկվեց ընդգրկել Հովհաննես Վաչեի Թոքմաջյանին և Արտակ Ասծատուրի Գուլյանին, իսկ խմբագրական խորհուրդի կազմում՝ Գեորգի Ամիրի Հակոբյանին, Արտակ Ասծատուրի Գուլյանին, Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյանին, Սարիբեկ Բարդուղի Գալստյանին և Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյանին:

**Որոշեցին 2.1**–«Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» ամսագրի համակարգող խորհուրդում առաջադրել.

1. Հովհաննես Վաչեի Թոքմաջյանին տ. գ.դոկտոր-պրոֆեսոր
2. Արտակ Ասծատուրի Գուլյանին կ.գ. դոկտոր-պրոֆեսոր

**2.2**- «Բարձր տեխնոլոգիաների տեղեկագիր» ամսագրի խմբագրական խորհուրդի կազմում առաջադրել.

1. Գեորգի Ամիրի Հակոբյանին կ.գ.դոկտոր-պրոֆեսոր
2. Արտակ Ասծատուրի Գուլյանին կ.գ. դոկտոր-պրոֆեսոր
3. Սեյրան Ալեքսանդրի Շահնազարյանին գ.գ.թ.դոցենտ
4. Սարիբեկ Բարդուղի Գալստյանին կ.գ.թ.դոցենտ
5. Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյանին տ.գ.դոկտոր-պրոֆեսոր:

**Լսեցին 3**-Շուշիի տեխնոլոգիական համալսարանում Ե.23.01-«Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ և շինարարական նյութեր» (խորհուրդի կազմը՝ Հովհաննես Վաչեի Թոքմաջյան տ. գ. դոկտոր-պրոֆեսոր, Էդգար Կոլումբոսի Բեգլարյան տ.գ.թ., Արայիկ Վլադիմիրի Հարությունյան տ.գ.թ.), Ե.23.02-«Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական, տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն»(խորհուրդի կազմը՝ Ռուդոլֆ Գերասիմի Իսրայելյան տ.գ.դոկտոր-պրոֆեսոր, Գևորգ Գագիկի Վերանյան տ.գ.թ., Իրինա Ռոբերտի Բաղդասարյան տ.գ.թ.), Զ.01.02-«Բուսաբուծություն»(խորհուրդի կազմը՝ Արտակ Ասծատուրի Գուլյան կ.գ. դոկտոր-պրոֆեսոր, Սարիբեկ Բարդուղի Գալստյան գ.գ.թ.դոցենտ, Թամարա Գրիգորիի Գրիգորյան գ.գ.թ.), Զ.01.04 -«Խաղողագործություն, պտղաբուծություն»(խորհուրդի կազմը՝ Գեորգի Ամիրի Հակոբյան գ.գ.դոկտոր-պրոֆեսոր, Ռուբեն Թադևոսի Խասապետյան գ.գ.թ. դոցենտ, Սուրեն Մխիթարի Շինդյան գ.գ.թ.) մասնագիտություններով ատենախոսության թեմաներ հաստատելու նպատակով ՀՀ ԲՈՀ ներկայացվող դիմումի մասին:

**Որոշեցին 3**-Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 08.08. 1997թ. հ. 327 որոշմամբ (փոփոխությունները՝ 21.10.2010թ. հ.1436-Ն և 26.02.2015թ. հ. 214-Ն որոշումներով) հաստատված «Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի»<sup>9</sup> ենթակետի պահանջները Շուշիի տեխնոլոգիական համալսարանում Ե.23.01.-«Շինարարական կոնստրուկցիաներ, շենքեր, կառույցներ և շինարարական նյութեր», Ե.23.02.-«Քաղաքացիական, արդյունաբերական, հիդրոտեխնիկական, տրանսպորտային և ստորգետնյա շինարարություն», Զ.01.02-«Բուսաբուծություն» և Զ.01.04 -«Խաղողագործություն, պտղաբուծություն» մասնագիտություններով ատենախոսության թեմաներ հաստատելու թույլտվություն ստանալու նպատակով դիմում ներկայացնել ՀՀ ԲՈՀ:

Նախագահ՝ ստորագրություն Հ.Վ.Թոքմաջյան

Քարտուղար՝ ստորագրություն Ա.Ա.Առաքելյան